ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 2 *Общественные науки*

Ս. Կարապետյան

ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌՈՒ «ԶԵԶՈՔ ԶՈՆԱՅՈՒՄ»

(1921 թ. փետրվար)

Առաջին իմպերիալիստական պատերազմում Գերմանիայի պարտության հետևանքով, գերմանա-թուրքական զորքերը թողեցին Անդրկովկասը. նրանց տեղը գրավեցին անգլո-ֆրանսիական ինտերվենտները։ 1918 թ. աշնանը թուրքական բանակը ևս թողեց Լոռին, նախօրոք թալանելով այն ըստ թուրքական բանակի տրադիցիաների։ Թուրքական բանակը Լոռին թողնելուց հետո, դեպի Լոռի շարժվեցին դաշնակցական Հայաստանի և մենշևիկյան Վրաստանի բանակները։ Լոռի-Փամբակը հայտարարվեց «վիճելի» տերիտորիա։ Անգլիական իմպերիալիստները օգտագործելով դաշնակների ու մենշևիկների միջև եղած հակասությունները և ազգային անտագոնիզմը, դաշնակներին և մենշևիկներին հրահրեցին պատերազմի միմյանց դեմ, ելնելով «բաժանիր, որ իշխես» անգլիական քաղաքականությունից։

Բոլշևիկյան Երկրային կոմիտեի ղեկավարությամբ, Հայաստանի և Վրաստանի բոլշևիկները, բանվորները և աշխատավոր գյուղացիները վճռական պայքարի դուրս եկան անգլիական իմպերիալիստների, դաշնակների և մենշևիկների կողմից կազմակերպված այդ եղբայրասպան պատերազմի դեմ։ Ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում, առանձնապես մերձ-պատերազմական գործողությունների շրջաններում, տեղի ունեցան բանվորների և գյուղացիների մի շարք ռևոլուցիոն ելույթներ, որոնք ահաբեկեցին պատերազմի հեղինակներին։ Պատերազմը ուղղվում էր նրա կազմակերպիչների դեմ։ Ահա այդ ժամանակ էր, որ հանդես եկան անգլիական իմպերիալիզմի ներկայացուցիչները։ Կանգ առեք, ասում են նրանք դաշնակ-մենշևիկյան վարիչներին, որովհետև պատերազմական գործողությունների շարունակելը ավելի կուժեղացներ բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն պայքարը, որը կվտանգեր ինչպես դաշնակ-մենշևիկյան, այնպես էլ անգլիացիների տիրապետությանը Անդրկովկասում։ Դեկտեմբերի 31-ին, ցերեկվա ժամը 12-ին, պատերազմական գործողությունները դադարեցվում են։

1919 թ. հունվարի 9-ից մինչև 17-ը Թբիլիսիում աշխատեց հայ-վրացական կոնֆերանսը՝ Բրիտանական բանակի գնդապետ Ռ. Ստյուարտի նախագահությամբ։ Այս կոնֆերանսի որոշմամբ—ավելի ճիշտ անգլիացիների կամքով—գրեթե ամբողջ Լոռին, 53 գյուղերով, Ալավերդու արդյունաբերական շրջանով հայտարարվում է «Զեզոք զոնա»—անգլիական գեներալ-գուբերնատորություն, գուբերնատոր Դուգլասի գլխավորությամբ։ Այսպիսով, Լոռու արդյունաբերական շրջանը, իր ստրատեգիկ նշանակությունն ունեցող երկաթգծով, Հայաստանից և Վրաստանից անջատելը և «Զեզոք զոնայի», այսինքն անգլիական գաղութի վերածելը տեղի ունեցավ անգլիացիների կողմից հրահրված այն ազգամիջյան պատերազմի հետե-

վանքով, որը փարքոցրս դաշնակ-մենշևիկյան կառավարությունները 1918 թ. դեկտեմբերին։ Այս մասին Ս. Օրջոնիկիձեն ասում է. «...Հենց որ իշխանության գլուխ անցան այսպես կոչված սոցիալիստ-մենշևիկները և դաշնակները, ապա երկու եղբայրական ժողովուրդներ մահացու պատերազմի դուրս եկան միմյանց դեմ, ինչ որ մի կտոր հողի համար թափելով հարյուրավոր հայ և վրացի գյուղացիների և բանվորների արյունը հօգուտ անգլիական վաճառականների և արդյունաբերողների, որոնք օգտվելով այդ բանից, քշեցին և՛ դաշնակ, և՛ մենշևիկ բանդիտներին այդ վիճելի տերիտորիայից և հայտարարեցին չեզոք, այսինքն վերցրին իրենց ձեռքը»։

Լոռին անջատվեց Հայաստանից ու Վրաստանից և ծանր վիճակ ստեղծվեց Լոռու աշխատավորների համար։ Թուրքական հրոսակախմբերի արշավանքը և թալանը Լոռում, ապա հայ-վրացական պատերազմը վերջնականապես քայքայեցին երկրի տնտեսությունը, կանգ առան Ալավերդու հանքերի շահագործումը և գործարանների աշխատանքները։ Երկրում բացակայում էր ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանությունը, տեղերում չկային դատարաններ, դատական քննիչներ և ոչ մի դատական մարմին, քաղաքացիական և քրեական գործերը Դուզլասի որոշմամբ հանձնվում էին Թբիլիսիում անգլիական գերագույն հրամանատարության կից զինվորական դատարանին և մեղադրյալները դատվում էին ռազմական ժամանակաշրջանի օրենքներով։

Հողը մնում էր կալվածատերերի և կուլակների ձեռքին. Լոռու աշխատավորներից անգլիացիները պանձում էին 14 տեսակի հարկեր. թալանը, ավազակությունը, կաշառակերությունը «անտեր» զոնայում, ինչպես ասում էին լոռեցիները, ոչ միայն չափից անցել էին, այլև դարձել էին սիստեմ։ Բանվորների համար ստեղծված դրության մասին «Կոմունիստ Գրուդիի» թերթն իր 1920 թ. հոկտեմբերի 22-ի համարում գրում է. «...Առանձնապես ծանր դրության մեջ ընկան Ալավերդու բանվորները, որոնք, բացի գործարանից, ոչինչ չգիտեին և ոչնչով չէին զբաղվում և գործարանը փակվելուց հետո, ծախելով ամեն ինչ, հիմա մերկ ու ոտաբոբիկ, սոված... նստած սպասում են վրկության, իսկ փրկությունը նրանց համար մինչև հիմա եղել է ժամը...»։

Միակ ելքը ստեղծված դրությունից ռևոլուցիոն պայքարի մեջ էր։ Լոռու բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք հիմնադրվել և դաստիարակվել են ընկեր Ստալինի և նրա հավատարիմ զինակիցներ Ս. Շահումյանի և Ս. Սպանդարյանի կողմից, պարտիական կազմակերպական աշխատանքների լեգալ և անլեգալ քաղաքական պայքարի խոշոր փորձ ունեին, հետևապես Լոռում ստեղծված ռեժիմը հանկարծակիի չբերեց Լոռու պարտիական կազմակերպություններին, նրանք, ըստ նոր իրադրության, վերակառուցեցին աշխատանքները և պայքարի դուրս եկան Լոռում սովետական կարգեր հաստատելու համար։

Զինված ապստամբության նախօրյակին Լոռում պարտիական անդամների թիվը հասնում էր մոտ 500—520 մարդու։ Պարտիական կազմակերպությունները ղեկավարվում էին Լոռու գավառային, Ալավերդու շրջանային, Հաղպատ-Մանեսի, Ջալալ-Օղլու և Ուզունլարի անլեգալ կոմիտեների

1 Ֆ. Կ. Օրջոնիկիձե, ճառերի և հոդվածների հաստատիր, 1939 թ., էջ 131.

կողմից։ Լոռու բոլշևիկյան կազմակերպությունները կապված էին Երկրային ու Տրիլիսիի կոմիտեների և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների հետ և սրանցից ստանում էին ղեկավարություն ու օժանդակություն։

Բոլշևիկյան Երկրային կոմիտեն, որին, Բաքվի կոմունայի անկումից հետո, գլխավորում էր ընկեր Ա. Միկոյանը, կազմակերպում ու ղեկավարում էր Լոռու և ողջ Անդրկովկասի բոլշևիկների պայքարը մենշևիկների, ժուսավաթականների, դաշնակների և ինտերվենտների դեմ։

Ա. Մռավյանը Լոռու բոլշևիկներին կապում էր Երկրային կոմիտեի հետ։ Ընկեր Ա. Միկոյանը անձամբ կապված էր Լոռու բոլշևիկների կազմակերպությունների հետ. 1919—1920 թ. թ. ժամանակաշրջանում ընկեր Միկոյանը երկու անգամ եղել է Լոռում և ղեկավար ցուցումներ է տվել Լոռու բոլշևիկյան կազմակերպություններին։ Ընկեր Միկոյանի հանձնարարությամբ հաճախակի Լոռի էին գալիս պարտիական ընկերներ, որոնք օգնում էին Լոռու ընդհատակյա աշխատող բոլշևիկներին նրանց աշխատանքներում։

Պարտիական կազմակերպությունների աճը, երիտասարդական խմբակների կազմակերպումը, Ուզունլարի, Ջալալ-Օղլու շրջաններում 1919—1920 թ. թ. կալվածատերերի հողերի բռնագրավման փորձերը, երկաթուղու բանվորների ռևոլուցիոն ելույթները դաշնակ-մենշևիկյան և անգլիական կնդեքիչների դեմ, վկայում են այն հսկայական աշխատանքների մասին, որը տարվում էին Լոռու բոլշևիկյան կազմակերպությունների կողմից։ Լոռու Զեղոք գոնայի բանվորների և գյուղացիների ռևոլուցիոն պայքարը նոր թափ է ստանում Ադրբեջանում և Հայաստանում սովետական իշխանություն ստեղծելուց հետո։

Ադրբեջանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո, Լոռու բոլշևիկյան կազմակերպությունները կապ են ստեղծում Սովետական Ադրբեջանի և Կավբյուրոյի—Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի հետ։ Կավբյուրոյի հանձնարարությամբ Լոռի են գալիս հայ, ռուս և ադրբեջանցի ընկերներ՝ Զեղոք գոնայում զինված ապստամբություն նախապատրաստելու համար։ Կավբյուրոյի հանձնարարությամբ Բաքվից Լոռի եկած ընկերներից մեկը—Գրիշա Առուստամյան—իր ստացած առաջադրանքների մասին գրում է.

«Ստանալով Երկրային կոմիտեից Լոռիում—առանձնապես երկաթգծի ուղղությամբ Սադախլո-Սանահին ռազմական դրուժիններ կազմակերպելու հանձնարարություն, ես մեծ դժվարությամբ Սադախլոյի վրայով հասա Հաղպատ... Ինձ հաջողվեց աշխատանքներ ծավալել Լոռու բոլոր հիմնական կետերում, որի հետևանքով ամառվա վերջերին մեր պարտիան ուներ 500-ից ավելի՝ դրուժիններում կազմակերպված և զինված ընկերներ»[1]

Կավբյուրոյի ղեկավարությամբ նման աշխատանքներ էին տանում Հայաստանի և Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունները։ Վրաստանում, Հայաստանում և Լոռու Զեղոք գոնայում զինված ապստամբության նախապատրաստական աշխատանքները կազմակերպում և ղեկավարում էր

[1] «Կավկազսկի բոլշևիկ» ժուռնալ 1923 թ., № 11։

կավբյուրոն։ Այս գործում Լոռու բոլշևիկյան կազմակերպություններին, առանձնապես ռուսական գյուղերի կազմակերպություններին, մեծ օժանդակություն ցույց տվեց Ս. Մ. Կիրովը, որը գտնվում էր Թբիլիսիում, որպես ՌՍՖՍՌ-ի դեսպան Վրաստանում, որի հետ կապված էին Լոռու բոլշևիկները։

Սեպտեմբերի 3-ից մինչև 7-ը Բաքվում տեղի ունեցավ արևելյան ժողովուրդների համագումարը, որին Լոռու կազմակերպություններից մասնակցում էին 17 պատգամավորներ։ Այստեղ առաջին անգամ Լոռու բոլշևիկների ներկայացուցիչները տեսնվեցին ընկ. ընկ. Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի հետ, որոնք մեծապես նպաստեցին Լոռու զինված ապստամբության նախապատրաստման գործին։ Համագումարի պատգամավորները (Սիմոն Իսրայելյան, Երվանդ Միկոյան և ուրիշները) պատմում են, որ մինչև համագումարի սկսվելը, ինչպես և համագումարի ժամանակ, հաճախ տեսնվում էին Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի հետ։

Ընկ. ընկ. Օրջոնիկիձեն և Միկոյանը հետաքրքրվում էին պարտիական գործերով, ինչպես և զինված ապստամբության նախապատրաստման աշխատանքներով։ Նրանց հետաքրքրում էր, թե ինչպես են Լոռու բանվորները և գյուղացիները վերաբերվում դեպի մենշևիկները և դաշնակները և ինչպիսի կարծիք ունեն սովետական իշխանության և Կարմիր Բանակի մասին։ Նրանք խոստանում են օգնել Լոռու աշխատավորներին նրանց ազատագրման գործում, սակայն կատեգորիկ կերպով զգուշացնում են, որ զինված ապստամբությունը պետք է լավ պատրաստել, հապճեպություն չպետք է թույլ տալ այդ գործում, որ Լոռում զինված ապստամբության հարցը պետք է կապել նույն հարցի հետ Հայաստանում և Վրաստանում։

Պատգամավորները գրեթե ամեն օր տեսնվում էին ընկ. Միկոյանի հետ։ Ա. Ի. Միկոյանը հաճախակի գալիս էր այն հանրակացարանը, որտեղ տեղավորված էին Լոռու պատգամավորները, զրույց էր ունենում Լոռու բոլշևիկյան պատգամավորների հետ, կոնկրետ ցուցումներ էր տալիս Լոռում զինված ապստամբության նախապատրաստման կապակցությամբ։ Պատգամավորների հանդիպումը Բաքվում ընկ. ընկ. Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի հետ՝ նոր եռանդ ու ոգևորություն ներշնչեց Լոռու բոլշևիկներին։ Պատգամավորները վերադառնալով Լոռի, նոր աշխուժություն ու թափ մտցրին իրենց աշխատանքների մեջ։

Ռևոլուցիոն շարժման ուժեղացումը Զեզոք գոնայում, Ագրբեջանում սովետական իշխանություն ստեղծելուց հետո, ստիպում է անգլիական ինտերվենտներին, մենշևիկներին և դաշնակներին լիկվիդացիայի ենթարկել Զեզոք գոնան։ Դաշնակցական «Նոր աշխատավոր» թերթը պահանջում է «Անհապաղ վերացնել այսպես կոչված Զեզոք գոտու գոյությունը, որը մի պատուհաս է հանդիսանում ոչ միայն Բորչալու գավառի, այլ և երկու հանրապետությունների համար»։[1]

Վրաստանի զինվորական նախարար Լորդկիպանիձեն հայտարարում է, թե «Զեզոք գոնան» դարձել է մի չարիք, որին պետք է վերջ տալ... Որ իրենք (այսինքն՝ վրացի մենշևիկները — Ս. Կ.) այժմ պատրաստ են միայն գոնայի խնդիրը վերջացնել, որովհետև դա երկու կողմերի համար էլ վտանգավոր

[1] «Նոր աշխատավոր», 4 սեպտեմբերի, 1920 թ.

մի տեղ է, ամենախոցելի տեղը ներքին կարգի անախորժությունների և բոլշևիկների գործողությունների տեսակետից...»[1]

Կովկասի անգլիական գերագույն կոմիսար Լյուկկը մեկնելով Երևան, Հայաստանի վարչապետի հետ օգոստոսի 31-ին զրուցելիս, հայտարարեց. «...Ներկա քաղաքական մոմենտը պահանջ է դնում անպայման համաձայնության գալ վրացիների հետ գոնե նեյտրալ գոտի հարցում։ Այդ շրջանը շատ վտանգավոր է բոլշևիկյան շարժումների տեսակետից...»[2]

Այս բոլորը ապացույց են այն մեծագույն աշխատանքի, որ ծավալվեց Լոռու Զեզոք գոտում Կավբյուրոյի--Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի գլխավորությամբ, որի հետևանքով Լոռին, ինչպես ասում էին դաշնակցականները և մենշևիկները, «չարիք», «պատուհաս» էր դարձել մենշևիկների, դաշնակների և անգլիական ինտերվենտների համար։

Զեզոք գոտան լիկվիդացիայի է ենթարկվում։ Նոյեմբերի վերջերին, երբ հայ ժողովուրդը հերոսական պայքարի էր դուրս եկել դաշնակների տիրապետության և թուրք օկուպանտների դեմ, մենշևիկները, Զեզոք գոտում զինված ապստամբությունը կանխելու համար, օկուպացիայի ենթարկեցին այն, այլև Սովետական Հայաստանի անվիճելի տերիտորիան— նախկին Զալալ-Օղլու շրջանը,սակայն, այդ ոչ մի կերպ չէր կարող կանխել Զոնայում հասունացող զինված ապստամբությունը։

Նոյեմբերի 29-ին սովետական իշխանության հաստատումը Հայաստանում մի նոր կարևորագույն և վճռական էտապ հանդիսացավ Լոռում զինված ապստամբության նախապատրաստման տեսակետից և կանխորոշիչ նշանակություն ունեցավ նրա հաղթանակի գործում։ Լոռին սերտորեն կապվեց Սովետական Հայաստանի հետ։ Լոռու բոլշևիկյան կազմակերպությունները Սովետական Հայաստանից և Ադրբեջանից, ինչպես և 11-րդ բանակի սահմանապահ զորամասերից ստանում են ամեն տեսակի օժանդակություն՝ զենք, զինամթերք, զինվորական կազմակերպիչներ, դրամ և այլն։ Այս տեսնում էին մենշևիկները և դաշնակները, որի հետևանքով ավելի էին ուժեղացնում ռեպրեսիվ միջոցները Լոռու աշխատավորության նկատմամբ։

Օկուպացիայի ենթարկելով Լոռին, մենշևիկները բացարձակապես կողոպտում էին գյուղացիներին։ Մենշևիկների երեք հազարանոց օկուպացիոն բանակն ամբողջովին ապրում էր գյուղացիների հաշվին։ Այդ բանակը կերակրելու համար նրանք բռնագրավում էին գյուղացիների բոլոր տեսակի առանց այդ էլ փոքրաքանակ մթերքները—հաց, կարտոֆիլ, պանիր, յուղ, նույնիսկ խոշոր եղջերավոր անասունները, ապա գյուղացիների անասունների կերը՝ խոտ, դարման և այլն։ Մենշևիկների այդ թալանչիական արարքների և բռնությունների մասին «Գրավդա»-ն գրում է. «...Ժողովրդական գվարդիականները (մենշևիկյան գվարդիան, Ս. Կ.) վայրենաբար բռնություններ էին գործադրում գյուղացիների նկատմամբ, թալանում էին նրանց, բռնաբարում կանանց։ Գյուղացիներին կիսամերկ դրությամբ դուրս էին վռնդում գյուղերից, որոնցից շատերը ցրտահար էին լինում...»[3]

---

1 Հայպետարխիվ, ֆ. 3, գ. 861։
2 Հայպետարխիվ, ֆ. 3, գ. 369, թ. 35։
3 «Գրավդա», 3 մարտի 1921 թ։

Մենշևիկյան իշխանությունների և օկուպացիոն զորքերի բռնությունները, թալանը, քաղաքական հալածանքները և բանտարկությունները ոչ-վոլուցիոն շարժումների նոր վերելք ստեղծեցին Լոռում։ Լոռու բոլշևիկների ղեկավարությամբ այդ շարժումներն ընթանում էին «Ուզում ենք միանալ Սովետական Հայաստանին» լոզունգի տակ։ Այս լոզունգի շուրջը մասսաներին մոբիլիզացիայի ենթարկելու նպատակով, բոլշևիկյան կազմակերպությունները Լոռում հրավիրում են հանդիպումներ, գյուղական ժողովներ, որտեղ որոշումներ են հանում միանալ Սովետական Հայաստանին և խնդրում են Սովետական Ռուսաստանից և Հայաստանից «Լսել իրենց ձայնը և օգնություն ցույց տալ իրենց» մենշևիկների տիրապետությունից ազատագրվելու համար։ Նախկին Վորոնցովկայի գյուղական հասարակությունը իր դեկտեմբերի 17-ի ժողովում որոշում է՝ օգնություն խնդրել Սովետական Ռուսաստանի և Հայաստանի կառավարություններից՝ ստեղծված դրությունից ազատագրվելու համար։ Դիմումը վերջանում է հետևյալ խոսքերով. «...Ցանկանալով ազատագրվել անկոչ վրացական կնյազների և աղնվականների իշխանության կողմից գործ դրված բռնություններից, նկուղներից և չղթաներից, մեր միակ ցանկությունն է տեսնել մեզ մոտ ժողովրդի ընտրյալների՝ բանվորների և գյուղացիների սովետական իշխանություն... Կեցցե՛ Սովետական Կոմունիստա՛կան իշխանությունը։ Կեցցե՛ Կոմունիստական Ռուսաստանը, Ադրբեջանը և Հայաստանը»։[1]

Ավելի վճռական ոտնձգությունը բնույթ էր կրում աշխատավորների և Անանահինի բանվորների ելույթը՝ Սանահին գյուղում։ Սանահին գյուղի աշխատավորները և կայարանի բանվորները, Սանահինի պարտիական կազմակերպության ղեկավարությամբ, 1920 թ. դեկտեմբերի սկզբներին գյուղը հայտարարեցին սովետական և կազմեցին Ռեկոմ, որը, երեք օր գոյություն ունենալուց հետո ցրվեց օկուպանտների կողմից։ Նման բացարձակ ոտնձգությունը ելույթները ավելի էին կատաղեցնում մենշևիկ օկուպանտներին։ Լոռում սկսում են գործել մենշևիկյան պատժիչ ջոկատները։

Սովետական Հայաստանի կառավարությունը վճռական կերպով պահանջում է մենշևիկներից դադարեցնել ոեպրեսիվ միջոցները Լոռու աշխատավորների նկատմամբ և Զեզոք գոտան, ինչպես և Սովետական Հայաստանից գրավված անվիճելի տերիտորիան ազատել մենշևիկյան զորքերից, բայց մենշևիկները, որոնք գործիք էին դարձել Անտանտի իմպերիալիստների ձեռքին, ոչ միայն չէին ազատում գրավված տերիտորիան, այլև վտարում էին նախկին Զեզոք գոտայի և Ջալալ-Օղլու շրջանի այն ծառայողներին, որոնք իրենց համարում էին Սովետական Հայաստանի հպատակներ։ Մենշևիկների կողմից բանտարկությունների ու զինաթափման վտանգը ստիպում է Լոռու բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությանը կռվող ուժերին գյուղերից դուրս բերել անվտանգ տեղեր—սարերը և ամառանոցները։ Բոլշևիկյան կազմակերպությունները միևնույն ժամանակ մեծ ագիտացիոն և հետախուզական աշխատանքներ են ծավալում վրացական զորքերի մեջ։

Զինված ապստամբության նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու և ղեկավարելու, մասնավորապես զինված ուժերի պարտի-

[1] Հայպետարխիվ, ֆ. 55, գործ № 116։

դանական ջոկատների կազմակերպման և նրանց ի մի համախմբելու և մի ընդհանուր ղեկավարության ներքո վերցնելու համար, ընկեր Օրջոնիկիձեի պահանջով, Հայաստանի Կոմունիստական Բոլշևիկների Կարտիայի կենտկոմը 1920 թ. դեկտեմբերի 20-ին որոշում է Սովետական Ղարաքիլիսայում ստեղծել «Ապստամբների շտաբ», բաղկացած երեք մարդուց—ընդհանուր պատասխանատու դեկավարից, ռազմական ղեկավարից և շտաբի պետից։ Շտաբին կցվեցին Կարմիր Բանակի պատասխանատու ռազմական և քաղաքական աշխատողներ։ Լոռու բոլշևիկյան կազմակերպությունների հարաճուն աշխատանքների հետևանքով 1921 թվի հունվարի սկզբներին հիմնականում ավարտվեցին մասսաների ռևոլուցիոն մոբիլիզացիայի և զինված ուժերի կազմակերպման աշխատանքները։ Լոռում զինված ուժերի կազմակերպվածությունը և դասավորումը հունվարի կեսերին ուներ հետևյալ պատկերը։

Սովետական Ղարաքիլիսայում լոռեցի պարտիզաններից կազմակերպված էին երկու մեծ պարտիզանական ջոկատներ, ամեն մեկը 400 մարդուց։ Այս ջոկատները, կոնսպիրացիայի ենթարկելու համար, պաշտոնապես կոչվում էին «Ղարաքիլիսայի պահակային գումարտակ»։ Ջոկատների հիմնական կորիզը կազմում էին Ալավերդու և երկաթգծի բանվորները։ Հաղպատի մոտ, «Խաչի դուռ» կոչվող վայրում կազմակերպված պարտիզանական ջոկատը բաղկացած էր 500 մարդուց։ Այս ջոկատը կազմակերպվեց դեռևս հունիս ամսին, նույնպես երկաթգծի և Ալավերդու բանվորներից։ Պրիվոլնոե գյուղի մոտ գտնվող անտառում գոյություն ուներ 160 մարդուց բաղկացած պարտիզանական ջոկատ, որը կազմված էր գլխավորապես Ջալալ-Օղլու շրջանի ռուս ընկերներից։ Այդ ջոկատն ուներ գնդացիրներ։ Այս, ինչպես և մյուս ջոկատները գտնվում էին Կարմիր Բանակի հրամանատարների դեկավարության տակ։ Սովետական Կողբում (այժմ Նոյեմբերյան) ևս կազմակերպված էր մի մեծ ջոկատ՝ մենշևիկների հալածանքներից փախած լոռեցիներից, որոնց միացան դազախեցիները ապստամբության ժամանակ։

Բացի այս ռազմականացված ջոկատներից, Լոռու գրեթե բոլոր գյուղերում և կայարաններում կազմակերպված էին փոքր խմբակներ, որոնք մասնակցեցին զինված ապստամբությանը, միանալով հիմնական ջոկատներին կամ կատարելով ինքնուրույն առաջադրանքներ։ Այսպես, օրինակ, կայարաններում կազմակերպված խմբակները ապստամբության ժամանակ շատ կարևոր աշխատանք կատարեցին կայարանների հեռագրատների, հեռախոսների գրավման և ապստամբությանն ի սպաս դնելու գործում, նրանք քանդում էին ճանապարհները, որպեսզի հակառակորդի զրահապատ գնացքները չանցնեն ապստամբների թիկունքը, և այլն։

Ջոկատների կազմակերպման աշխատանքների մասին Ղարաքիլիսիայի Ռևկոմը սեպտեմբերի 17-ին պարտիական կենտկոմին ուղղած իր զեկուցագրի մեջ հայտնում է հետևյալը. «...Մենք կազմակերպեցինք զինված ուժեր ամեն մի գյուղում 50-ից մինչև 500 մարդ։ Հիմա այդպիսիների թիվը հասնում է մինչև 2500 մարդուց»[1]

Լոռու Զեզոք գոտում զինված ապստամբության արագացումը թե-

[1] Հայպետարխիվ, ֆոնդ 55, գործ 11։

լաղրվում էր և այդ ժամանակ Կովկասում ստեղծված միջազգային դրությամբ։ Կորցնելով Դենիկինին, Վրանգելին և դաշնակցական Հայաստանը, Անտանտը իր ուշադրությունը կենտրոնացրել էր ժենշևիկյան Վրաստանի վրա, կատարելով այնտեղ ուժերի կուտակում։ 1920 թ. աշնանը, ժենշևիկյան Թբիլիսին հանդիսանում էր հակասովետական կոնտրռևոլուցիոն ուժերի կենտրոն։ Այստեղ էին հավաքվել Դենիկինի, Վրանգելի ջախջախված բանակների մնացորդները և նրանց դումակում գանվող ամեն տեսակի ու գույնի հին հասարակարգի մնացորդներ—կալվածատերեր, ազնվականներ, կապիտալիստներ, խոշոր չինովնիկներ և այլն։ Այստեղ էին հավաքվել Ադրբեջանից, Հայաստանից, Թերեկից, Կուբանից, Դոնից, Ղրիմից, Դաղստանից փախած կոնտրռևոլուցիոներները և նրանց պաշտպանները։ Այստեղ՝ Թբիլիսիում, «Օրիանտ» հյուրանոցումն էին գտնվում անգլո-ֆրանսիական հրամանատարության կողմից կազմակերպված այս երկրների «փրկության կոմիտեները», որոնց Անտանտի իմպերիալիստները ֆինանսավորում էին սովետական ռեսպուբլիկաների դեմ կռվելու համար։ Անտանտի իմպերիալիստների թելադրանքով ժենշևիկները պրովոկացիոն գործողություններ են սկսում Սովետական Հայաստանի դեմ։ Նրանք բլոկադայի ենթարկեցին Սովետական Հայաստանը, չթողնելով, որ Սովետական Ռուսաստանից և Ադրբեջանից ուղարկված հացի, նավթի, ժթերքների, մանուֆակտուրայի էշելոնները Վրաստանի վրայով անցնեն Հայաստան, նպատակ դնելով սովի մատնել առանց այն էլ սոված Հայաստանի աշխատավորներին, որպեսզի, այդպիսով, Հայաստանում դժգոհություններ առաջ բերեն Սովետական իշխանության դեմ։ Իրենց պրովոկացիոն գործողություններով մենշևիկները, անգլիացիների թելադրանքով, կոիվ էին պատրաստում Սովետական Հայաստանի դեմ։

Զեղոք գոնայի աշխատավորների շահերը, հայ և վրաց ժողովուրդների, սովետական ռեսպուբլիկաների շահերը պահանջում էին անհապաղ լիկվիդացնել կոնտրռևոլուցիոն այդ օջը, քանի որ սպառնալից էր դառնում ռեալ վտանգը, որ ստեղծվել էր Անդրկովկասում՝ Անտանտի իմպերիալիստների և վրաց մենշևիկների կողմից՝ սովետական ռեսպուբլիկաների հանդեպ։ Իսկ ինչպես էր գրությունը Վրաստանում։ Մենշևիկները երկիրը դարձնելով իմպերիալիստական պետությունների գաղութ, այն հասցրել էին կործանման դուռը։ Ընկեր Ստալինը այդ ժամանակ Վրաստանում ստեղծված դրության մասին գրում է. «Վրաստանի տնտեսական և պարենային կատաստրոֆիկ դրությունը մի փաստ է, որ արձանագրում են նույնիսկ ներկա Վրաստանի պարագլուխները։ Վրաստանը, որը խճճվել է Անտանտի թակարդում և այդ պատճառով զրկվել է ինչպես Ռաքվի նավթից, այնպես էլ Կուբանի հացից, Վրաստանը, որը դարձել է Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստական օպերացիաների հիմնական բազան և այդ պատճառով ժամանակավոր հարաբերություններ է հաստատել Սովետական Ռուսաստանի հետ, այդ Վրաստանը այժմ ապրում է իր կյանքի վերջին օրերը»։[1]

Սերգո Օրջոնիկիձեի անմիջական ղեկավարությամբ, Վրաստանի Կոմունիստական Պարտիան խոշոր աշխատանք ծավալեց Վրաստանում և նրա մի մասը կազմող Զեղոք գոնայում գինված ապստամբության նախապատրաստման գործում։ Բանվորների մասսայական հեռացումը մենշևիկյան

1 Ստալին—Դրությունը Կովկասում, «Պրավդա», 30 նոյեմբերի 1920 թ.

պարտիայից, պրոֆեսիոնալ միությունների մի շարք բանվորական կազմակերպությունների նվաճումը կոմունիստների կողմից, բանվորական և գյուղացիական ռևոլուցիոն ելույթները մենշևիկյան կառավարության դեմ, ռևոլուցիոն ելույթները մենշևիկյան բանակում,—ապացույց են այն տնտեսական ու քաղաքական ճգնաժամի, որ ստեղծվել էր այդ ժամանակ մենշևիկյան Վրաստանում։ Այսպիսով, զինված ապստամբությունը Վրաստանում ևս հասունացել էր։

Լոռում զինված ապստամբությունը կազմակերպված անցկացնելու, այդ ուղղությամբ կատարված աշխատանքներն ստուգելու, Լոռու բոլշևիկյան կազմակերպություններին ղեկավար ցուցումներ տալու նպատակով, Սովետական Ղարաբիլիսայում, հին բոլշևիկ, Կենտկոմի և Հայռեկոմի անդամ ընկ. Ասքանազ Մռավյանի ղեկավարությամբ, 1921 թվին հունվարի 2-ին հրավիրվում է Լոռու պարտիական կազմակերպությունների կոնֆերանս, որտեղ քննության են առնվում զինված ապստամբության հարցերը և համապատասխան որոշումներ են ընդունվում այդ առթիվ։ Կոնֆերանսից հետո խորհրդակցություններ են հրավիրվում Ղարաքիլիսայի «Ապստամբների շտաբում» և շրջաններում, որտեղ նույնպես քննվում են զինված ապստամբության հարցերը։ Այս խորհրդակցություններում կատարվում է աշխատանքի բաժանում, մշակվում են զինված ապստամբության կոնկրետ պլաններ, պաշտոնապես հայտարարվում է, որ փետրվարի առաջին կեսերին տեղի է ունենալու զինված ապստամբություն Զեզոք գոտում։

Հունվարի կեսերին Հաղպատի և Շնողի կազմակերպությունները որոշում են ընդունում հատուկ պատգամավորություն ուղարկել Բաքու, ընկեր Օրջոնիկիձեի մոտ, խնդրելով նրան արագացնել զինված ապստամբությունը։ Այդ պատգամավորությունը հաջողությամբ հասնում է Բաքու։ Ընկեր Օրջոնիկիձեն, ինչպես պատմում է պատգամավորության անդամ Հ. Շահնազարյանը, մեծ սիրով և համակրանքով է ընդունում պատգամավորներին։ Պատգամավորները պատմում են ընկեր Օրջոնիկիձեին այն սոսկալի դրության մասին, որ ստեղծել են Լոռում մենշևիկ օկուպանտները, և խնդրում են արագացնել իրենց ազատագրման գործը։ Ընկեր Օրջոնիկիձեն հավաստիացնում է, որ բոլոր միջոցները ձեռք են առնված կարճ ժամանակամիջոցում Լոռին մենշևիկներից ազատագրելու համար։ Պատգամավորներից մեկը՝ Գրիշա Առուստամյանը այս մասին գրում է. «Ստանալով ընկ. Օրջոնիկիձեից խոշոր բարոյական և մի քիչ էլ նյութական օժանդակություն, մենք հունվարի վերջերին հասանք Լոռու սահմանակից Կողբ գյուղը...»։[1]

1921 թ. փետրվարի սկզբներին սովետական Կողբ գյուղում, Կավբյուրոյի կողմից կցված ընկերոջ նախագահությամբ և Աեդրակ Սարգսյանի (բանվոր)-ու Սիմոն Էվոյանի (բանվոր) անդամակցությամբ կազմակերպվեց Լոռու «Ռազմա-հեղափոխական կոմիտե»։

Փետրվարի 7-ին տեղի ունեցավ Ալավերդու շրջանի ղեկավար աշխատողների խորհրդակցություն, ուր նախատեսվեց Ալավերդու շրջանային Ռևկոմի կազմը՝ Սիմոն Էվոյանի նախագահությամբ, Մելիք-Ալիխանյանի և ուրիշ երեք բանվորների անդամակցությամբ։ Խորհրդակցությունը ընկ. Ս. Իսրայելյանին առաջադրեց Ալավերդու շրջանի պարտիզանական ջոկատի

[1] «Կավկազսկի բոբոչկա», № 11, 1922 թ.

կոմիսար։ Հունվարի 10-ին 70 պարտիզաններ սովետական Կոդրից Լոռի անցափոխեցին գենքի վերջին պարտիան։ Փետրվարի 7-ից մինչև 9-ը Ղարաքիլիսայի «Ապստամբների շտաբը» և Լոռու Ռազմհեղկոմը պաշտոնապես հայտարարեցին բոլշևիկյան կազմակերպություններին և պարտիզանական ջոկատներին՝ փետրվարի լույս 12-ի գիշերը, ժամը 2-ին, դինված ապըստամբություն սկսելու մասին։ Ղարաքիլիսայի պարտիական Կոմիտեն հատուկ գիտում ուղղեց Հաղպատի Ռայկոմին։ Տիմուսի մեջ ասվում է.

«Ընկերներ,

Հասել է այն ժամը, երբ դուք ձեր ուժերով օգնության պիտի դաք տապալելու վրաց դյուքանչիների պիղծ լուծը։ Առաջարկվում է ձեզ փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը, ուղիղ ժամը 2-ին, բարձրացնել ապստամբություն Սանահին, Հաղպատ և Որնակ գյուղերում և դինաթափ անել այդ գյուղերում դանվող վրացական դինվորներին։ Գիտցեք, որ այդ ժամին ապստամբություն է լինելու ամբողջ Զեղոք գոտում և Վրաստանում։ Ձեր շրջանի գյուղերը դինաթափելուց հետո, անմիջապես պետք է դրավել Հաղպատ կայարանը, Ալավերդի գյուղը և Մագանը...»[1]։

Փետրվարի 11-ի երեկոյան, Ղարաքիլիսայի «ղահակային գումարտակը», բաղկացած 800 մարդուց, ստացավ իր մարտական խնդիրը և դուրս եկավ գործողության. այդ գումարտակի վաշտերից մեկը առաջադրանք ստացավ գիշերվա ժամը 2-ին ավարտել ժենշևիկների կողմից Շահալուի ականված կամուրջի գրավումը, այլապես ժամը 2-ին սկսելիք ապստամբությունը կստիպեր մենշևիկներին պայթեցնելու կամուրջը։ Վաշտը Ցաղուրլիի վրայով իջավ Փամբակ կիսակայանը. այդ ժամանակ Շահալուի պարտիզանական խումբը կտրեց ականների էլեկտրալարերը, որով և ապահովեց կամուրջի անվտանգությունը։ Իմանալով, որ էլեկտրալարերը կտրված են, վաշտը շարժվեց առաջ, կայծակնային հարձակումով դրավեց Շահալուի կամուրջը, անաղմուկ կերպով դինաթափ արավ կայարանի կայազորը և կամուրջի պահակախումբը։ Կամուրջը փրկված էր, դա ապըստամբների առաջին և խոշոր հաղթանակն էր։ Փետրվարի լույս 12-ի գիշերը, ժամը 2-ին սկսվում է ընդհանուր ապստամբությունը։ Փետրվարի 11-ին ուշ երեկոյան պարտիզանական ջոկատները բոլոր շրջաններում դուրս են գալիս իրենց մարտական խնդիրները կատարելու։ Գիշերվա ժամը 2-ին Հաղպատի բարձունքից բաց է թողնվում պայմանավորված հրթիռը—ռակետը։ Ի պատասխան սրան, շրջակա գյուղերից արձակվում է մեկական հրթիռ։ Նույն ժամենտին Հաղպատից բաց է թողնվում երկու հրթիռ, դա Ռազմհեղկոմի պայմանական դիրեկտիվն էր, որ նշանակում էր «սկսել հարձակումը»։ Ժամը 2-ին ապստամբների դինված ուժերն սկսում են մարտական գործողությունները։ Կտրվում են մենշևիկյան կայազորները միմյանց հետ միացնող կապի բոլոր միջոցները, քանդվում են երկաթգծի որոշ մասեր, պարտիզանական ջոկատներն արդեն այդ ժամին մոտենում են կայարաններին և գյուղերին, որտեղ կային մենշևիկյան կայազորներ, և գրոհում են նրանց վրա։ Փետրվարի 12-ին Սանահնի, Հաղպատի և Ղազախի պարտիզանական ջոկատները երեք կողմից—Կոշաբերդի, Սանահնի և Հաղպատի—հարձակվում են Զեղոք գոնայի վարչական կենտ-

[1] Գառա. արխիվ, հատուկ ֆոնդ, 18 գործ, կապոց 3։

րոն Ալավերդի-Մանեսի վրա, զինաթափ են անում կայազորը և զերի են վերցնում Զեզոք գոտայի կոմիսարին ու մենշևիկ նահանգապետին։ Նախօրոք ագիտացիայի ենթարկված մենշևիկյան զինվորների մի մասը անձնատուր է լինում ապստամբներին։ Մենշևիկները ապստամբների հարվածների տակ փախչելով, հրի են մատնում Լոռու գյուղերը։ Ապստամբները զիմում են Գարմիր Բանակի օգնությանը։ Ազատարար Կարմիր Բանակը փետրվարի 12-ին Սովետական Հայաստանի սահմաններից օգնության է գալիս Լոռու ապստամբներին։ Այդ առթիվ 11-րդ բանակի դաշտային քաղրաժինը մի կոչով դիմում է վրաց զինվորներին. կոչի մեջ ասված է.

«...Մենք օգնության եկանք Զեզոք գոտայի—Բորչալուի գավառի ապստամբ գյուղացիներին, որոնց մենշևիկյան կառավարությունը փորձում էր ոչնչացնել հրով և սրով»։

Փետրվարի 12-ից մինչև 14-ը ապստամբները զերի վերցրին վրացական 3000 զինվոր և ստա։ Ապստամբությունը Զեզոք գոտայում հաղթանակեց, Լոռին ազատագրվեց մենշևիկներից։ Փետրվարի 14-ին «ապստամբների շտաբը» և Լոռու Ռազմհեղկոմը մի կոչով դիմեցին Սովետական Ռուսաստանին, Հայաստանին, Ադրբեջանին և Վրաստանի բանվորներին ու գյուղացիներին։ Կոչի մեջ ասված է.

«Աշխատավոր եղբայրներ,

Մենք, Լոռու Զեզոք գոտայի գյուղացիներս, բարձրացրինք ապստամբության դրոշը և Լոռում հայտարարեցինք Սովետական իշխանություն. «դեմոկրատական» Վրաստանի արյունարբու կամակատարությունը համախմբեց իր դեմ աշխատավոր դյուղացիներին, առանց ազգի և դավանանքի խտրության։ Հայ, ռուս, ադրբեջանցի և վրացի դյուղացիների եղբայրական միությունը որոշեց մեր հաղթանակի բախտը։ Երկու օրվա ջերմեռանդ պայքարի հետևանքով Լոռին դարձավ ազատագրված դյուղացիական երկիր։ Մենշևիկյան Վրաստանի օպրիչնիկները փախչելով, այրեցին և թալանեցին մեր լավագույն գյուղերը—Վորոնցովկան, Գրիվոլնոեն, սակայն նման ստորաքարշները կազմում էին մի փոքր խմբակ, իսկ ազնիվ զինվորները, չմոռանալով բանվորի և գյուղացու խիղճը, անձնատուր եղան առանց կռվի... Ողջույն ձեզ, վրացական բանվորներ ու գյուղացիներ, ազատագրված Լոռու գյուղացիությունից։ Մենք համոզված ենք, որ ոչ ոք ձեզ չի կարող ստիպել կռվի դուրս գալ մեր ազատության դեմ, խլել մեր հողը, իսկ մենք կպաշտպանենք մեր սովետական իշխանությունը մինչև վերջ։ Մենք համոզված ենք, որ մեր ամրապնդված Սովետական Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի եղբայրները չեն վերադարձնի մեզ մեր բռնակալներին, մենք մեզ դնում ենք եղբայրական սովետական հանրապետությունների հովանավորության տակ...»։

Ապստամբների շտաբ Լոռվա Ռեկոմ։

Ռևոլուցիայի մեծ հանճարը—Վ. Ի. Լենինը ուշի ուշով հետևում էր Վրաստանի և Լոռու աշխատավորների ազատագրական պայքարին։ Փետրվարի 26-ին Մոսկվայի Սովետի պլենար նիստին իր զեկուցման մեջ, Վրաս-

[1] Կոչը վերցված է Լենինի Քանգարանի Թբիլիսիի ֆիլիալի ֆոնդային բաժնից։

[2] Այս գոկումենտը վերցված է Լենինի Քանգարանի Թբիլիսիի ֆիլիալի ֆոնդային բաժնից։

տանում Սովետական իշխանության հաստատվելու կապակցությամբ. Լենինը Լոռու հերոսական զինված ապստամբության և նրա պատճառների մասին ասում է. «Միջազգային երրորդ հարցը Կովկասի դեպքերն են։ Այնտեղ վերջին ժամանակներս խոշոր դեպքեր տեղի ունեցան... Նրանց էությունն այն է, որ մենք մեծ պատերազմի շեմքին ենք։ Հայաստանի և Վրաստանի ընդհարումը չէր կարող չհուզել մեզ և այդ դեպքերն այն բանին հասցրին, որ հայ-վրացական պատերազմը փոխվեց ապստամբության, որին մասնակցում էր նաև ռուս զորքերի մի որոշ մասը։ Եվ այդ նրանով վերջացավ, որ հայ բուրժուազիայի հետին մտադրությունը մեր դեմ, գոնե մինչև այժմ, իրենց դեմ դարձավ և այնպես դարձավ, որ Թիֆլիսում... Սովետական իշխանություն ստացվեց։ Մենք գիտենք, որ ապստամբությունը Հայաստանում սկսվեց հենց այն Զեզոք գոնայում, որը Վրաստանի և Հայաստանի մեջտեղն է ընկած և որը Վրաստանը գրավել էր Անտանտի իմպերիալիստների թույլատվությամբ... Վրաց մենշևիկների ձեռքին էր գտնվում հայ գյուղացիությանը միակ երկաթուղով պարենավորելու բանալին... Ոչ ոք համբերություն չի ունենա կարդալու այն հեռագրերը, հայտարարություններն ու բողոքները, որ մենք այդ առթիվ փոխանակել ենք Վրաստանի հետ։ Եթե մենք հաշտության պայմանագիր ունենայինք Վրաստանի հետ, պետք է, ինչքան կարելի է երկարացնեինք այն։ Բայց եթևակայեցեք, որ հայ գյուղացիությունը պայմանագրի վրա այդպես չէր նայում. բանը վերջացավ նրանով, որ փետրվարի սկզբին սարսափելի ապստամբություն պոռթկեց, որը զարմանալի արագությամբ տարածվեց և ընդգրկեց ոչ միայն հայ բնակչությանը, այլև ուրիշներին»։[1]

Փետրվարի 16-ին ամբողջ Լոռին ազատագրվեց վրացական օկուպանտներից։ Լոռու ապստամբ գյուղացիները և Հայաստանից նրանց օգնության եկած Կարմիր Բանակի զորամասերը հասել էին վրացական սահմանին։ Սերգո Օրջոնիկիձեի հրամանով նրանք անցնում են Վրաստանի սահմանը և 16-ին մտնում են Շուլավեր (ներկայումս՝ Շահումյան), որը համընկնում է Շուլավերում Վրաստանի Ռևկոմի կազմակերպման հետ։ Այդ ժամանակ Վրաստանի կոմունիստական պարտիան, Վրաստանի բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին ապստամբության էր դուրս բերել Վրաստանի մենշևիկյան կառավարության ու Վրաստանում բուն դրած Անտանտի իմպերիալիստների դեմ։ Վրաստանի Ռևկոմի կոչով Կարմիր Բանակի զորամասերը և ընկ. Օրջոնիկիձեի ու Կիրովի կողմից կազմակերպված պարտիզանական ջոկատները Վրաստանի հետ սահմանակից սովետական բոլոր շրջաններից օգնություն են գնում մենշևիկների դեմ ապստամբած վրաց ժողովրդին։ Փետրվարի 25-ին Վրաստանի ապստամբ բանվորների և գյուղացիների, սրանց օգնության եկած Կարմիր Բանակի հարվածների տակ տապալվում է մենշևիկյան իշխանությունը Վրաստանում։

Ընկեր Օրջոնիկիձեն, որ անմիջապես կազմակերպում ու ղեկավարում էր զինված ապստամբությունը Լոռում և Վրաստանում, նրա հետագա զարգացման և նրա նշանակության մասին գրում է. «Ապրիլյան ապստամբությունը Վրաստանում սկսվեց այսպես. Լոռու գյուղացիությունը ապստամբվեց մենշեվիկների օկուպացիոն զորքերի դեմ։ Մենշեվիկյան մոտ երեք հազար զինվորներ

[1] Լենին, հատ. 26, էջ 353—354, հայ. հրատ.

հրացանները շպրտելով գրեթե առանց դիմադրության, անձնատուր եղան ապստամբներին։ Երեք-չորս օրվա ընթացքում ոչ միայն Զեղոք Գոտին, այլև ամբողջ Բորչալուի գավառը ազատագրվեց մենշևիկյան զորքերից։ «Ապստամբներին օգնության հասավ Կարմիր Բանակը և դրանով կանխորոշվեց Թիֆլիսի անկումը...»։[1]

Զինված ապստամբությունը հաղթանակեց Վրաստանում և Լոռում։ Սրանով և կանխորոշվեց Թբիլիսիում հավաքված կոնտրռևոլուցիայի թելադրանքով դաշնակցականների կողմից կազմակերպված փետրվարյան (1921 թ.) ավանտյուրտյի լիկվիդացիան Հայաստանում։

Լոռու զինված ապստամբության պատմական նշակությունն այն է, որ նա սկիզբ դարձավ այն մեծ պատերազմի, որը, Կարմիր Բանակի օգնությամբ, կազմակերպեցին Վրաստանի, Լոռու և Անդրկովկասի բոլոր ժողովուրդները, Թբիլիսիում կենտրոնացված կոնտրռևոլուցիայի և ինտերվենտների դեմ։ Այսպիսով՝ Լոռու ապստամբ բանվորները և գյուղացիները առաջին հարվածը հասցրին սովետական ռեսպուբլիկաների դեմ նոր կոնտրռևոլուցիոն դործեր կազմակերպելու բազա դարձած մենշևիկյան Թբիլիսիին և այնտեղ բուն դրած ինտերվենտներին։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիան վերջնականապես հաղթանակ տարավ նաև Անդրկովկասում։

---

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Հոդվածների և ճառերի հատընտիր, 1939 թ., էջ 106—107, 118։
Տեղեկագիր 8—6